

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Առ Գրպծ. Հմայեակ վարդ. Կէտիկեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան
Վեներտիկ, Ս. Ղազար

Ցառով կը լսենք Խալիոյ աղէտի մասին: Վշտակցաբար աղօթող ենք,
որ Աստուած ողորմի եւ օգնական ըլլայ երկրին ու ժողովրդին: Եղբայրաբար
մտահոգ ենք ձեր եւ ձեր վանքի վիճակով: Ինչո՞վ կրնանք ձեզի օգտակար
ըլլալ: Կը սպասենք ձեզմէ լուրերու: Ձեզի ոյժ եւ կորով եւ խաղաղութիւն:
Սիրով եւ օրհնութեամբ

ՎԱԶԳԷՆ Ա.

Ս. Էջմիածին, 21 Նոյ. 1966

Կաթողիկոս Ամենայն Հայոց

* * *

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն հանեցէք ընդունիլ մէկ միլիոն իտա-
լական լիրայ, Սուրբ Ղազարի նորոգումներու հաշուին: Աղօթող ենք որ ջր-
հեղեղի պատճառած աւերները շուտ լիով դարմանուին: Աստուած անշարժ
ու անփորձ պահէ ձեր Լոյսի Տունը, որ արժանի է բոլոր Հայերու գուր-
գուրանքին:

ՎԱԶԳԷՆ Ա.

Ս. Էջմիածին, 10 Յունուար, 1967

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Առ Ն. Ս. Օծուրին

Վեհափառ Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին

Շատ մեծ յուզումով ստացանք Ձեր վշտակցական հեռագիրը: Ձեր ազ-
նիւ մտահոգութիւնը եւ աղօթքը քաջալեր եղան մեզի: Նիւթական շատ վնաս-
ներ ունեցանք: Փրկուած են քանգարանի գանձերը եւ ձեռագիրները: Կը յա-
ջորդէ լրատու նամակ: Ամենախորին մեծարանքով

Վեներտիկ, Ս. Ղազար
24 Նոյեմբեր, 1966

Հմայեակ վարդ. Կէտիկեան
Ընդհ. Աբբահայր
Մխիթարեան Միաբանութեան

* * *

Ձեր սրտաբուխ եւ հայրական նուէրը անպատմելի յուզում պատճառեց
բոլոր Միաբանութեանս, անտարակոյս նաեւ մեծ հրնուանք՝ Մխիթարի եւ
Ալիշանի լուսապսակ հոգիներուն: Երախտապարտ զգացումներով ջերմօրէն
կ'աղօթենք որ Աստուած փոխարէն բիրապատիկ պարգեւներով լիացնէ Ձերդ
Վեհափառութիւնը եւ Միածնի Իջման սուրբ Վանքը, ու միշտ անշարժ պահէ
զԱթոռ Հայկազնեայց: Ամենախորին մեծարանքով

Վեներտիկ, Ս. Ղազար
13 Յունուար, 1967

Հմայեակ վարդ. Կէտիկեան
Ընդհ. Աբբահայր
Մխիթարեան Միաբանութեան

ՈՂՈՂՈՒՄՆ Ի Ս. ՂԱԶԱՐ, 1966

Ծովն անկասելի, հետն առած գայրոյքն, անձրեւն ու քամին,
իր մութ բացերէն կոհակ առ կոհակ նետուեցաւ վերաս,
Գերեց պաշտպանման խրամներն ամէն, ապա վազն ի վազ
Հասաւ կարմրախայտ որմերուս երկփեղկ փոքրիկ դռնակին:

Ամենի քափով ե'տ շրպտեց գայն, բախեց վեր ու վար,
Եւ իր գոչիւնով լըռութիւնն եղծեց իմ առանձնութեան,
Ձաւակներս ընդոստ ձայն տըւին իրար խորանէ խորան,
Ցասմամբ եռեփուն՝ եկան կանգնեցան պայֆարի՝ համար:

Ձուրը դարձաւ ձախ, բարձրացաւ վերեւ, յառաջեց դժխեմ,
Դէմն իր գտնելով մեր Մըշակոյքին պատուարը շրքեղ,
Մեքենաներուն ժըխորին մէջ խուլ վայրկեանն էր ահեղ,
Ծով ու վարդապետ արդ կ'ոգոթէին ելած իրար դէմ:

Թողած ամէն ինչ, գաւակներս գրկած գիրք ու մագաղաթ,
Ռազմանակատին առաջին զրծէն քաշուեցան լըռիկ,
Բայց չէր այդ նահանջ, այլ լոյսին տանող բարձունք երջանիկ,
Հայկեան Ոգին էր որ կ'ելլէր ափունք՝ մահէն ձերբազատ:

Հիմա նոյնն եմ ես, խաւարը խուսող փարոսն երբեմնի,
Կեանքս կը սահի աշխատանքի մէջ, անուր նըւիրման,
Ըզգացի որ ես չեմ լոկ պաշարուած ծովէն մոլեկան,
Այլ աւելի մեծ ծովէ մ'անյատակ՝ որ սէ'ր կը կոչուի:

Արդ վերագրեալ խաղաղութեան դաշտն, ուղի'ն բազմասուն,
Կ'ապրիմ ծովուն հետ սուրբ եղբայրութեան հաշտարար ոգով,
Ձի դարէ ի դար միակ ընկերն է մենութեանն իմ բով,
Մոռցած առ յաւէտ երէկ հասցուցած չարիքն իմ գլխուն:

Ամէն առաւօտ կ'ողջունեմ երկինքն, ա'յգն հոգեհրմայ,
Ըզգալով սրտիս մէջ ծաղկող սիրոյ այրուցն ու փրքում,
Թէպէտեւ կղզեակ՝ չե'մ կղզիացեալ, հողմերն անպատում
Իմ աշխատանքին կը տանին սերմերն ուր որ Հայ մը կայ:

Միլանոյ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ